ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ և «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը («ՄՄՀԿ»), որի կենտրոնակայանը գտնվում է Շվեյցարիայի Ժնև քաղաքում, և «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը («ԱԱ ՊՈԱԿ»), որը գտնվում է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում (այսուհետ՝ առանձին՝ «Կողմ», իսկ միասին՝ «Կողմեր»),

Հաշվի առնելով, որ ՄՄՀԿ-ն միջկառավարական կազմակերպություն է և Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված հաստատություն, որի առաքելությունն է առաջնորդել մտավոր սեփականության հավասարակշռված և արդյունավետ համաշխարհային էկոհամակարգի զարգացումը՝ նորարարությունն ու ստեղծարարությունը խթանելու համար՝ հանուն ավելի լավ և ավելի կայուն ապագայի,

Հաշվի առնելով ԱԱ ՊՈԱԿ-ի մանդատը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետությունում դատավորների, դատախազների և քննիչների մասնագիտական պատրաստմանն ու շարունակական կրթությանը,

Կարևորելով Կողմերի միջև համագործակցությունը մտավոր սեփականության ոլորտում արդարադատության իրականացման հարցում՝ մտավոր սեփականության համակարգի առավելություններից օգտվելու համար, և համապատասխան միջազգային նորմերին ու համընդհանուր ճանաչված սկզբունքներին համահունչ,

Համաձայնեցին կնքել Փոխըմբռնման հուշագիր (այսուհետ՝ «Հուշագիր»)՝ հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1. ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն Հուշագրի նպատակն է զարգացնել Կողմերի միջև համագործակցությունը և համատեղ գործունեությունը՝ ուղղված մտավոր սեփականության պաշտպանության ոլորտում դատական համակարգի և ծառայությունների ամրապնդմանը:

ՀՈԴՎԱԾ 2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

1-ին հոդվածում նշված նպատակին հասնելու համար Կողմերը կձգտեն իրականացնել տեղեկությունների փոխանակման և կարողությունների զարգացման մի շարք միջոցառումներ, այդ թվում՝

- դատական փորձի փոխանակում.
- համագործակցություն դատական կարողությունների զարգացման ոլորտում.
- համատեղ հետազոտություններ մտավոր սեփականության ոլորտում և ուսումնական ու մեթոդական նյութերի մշակում՝ կրթական և վերապատրաստման ծրագրերի բովանդակությունը հարստացնելու նպատակով.
- վեճերի լուծման այլընտրանքային եղանակների (հաշտարարություն, արբիտրաժ) վերաբերյալ համատեղ կրթական ծրագրերի և վերապատրաստումների կազմակերպում, ինչպես նաև դրանց վերաբերյալ իրազեկության բարձրացում.
- համագործակցության ցանկացած այլ ձև, որի շուրջ Կողմերը կարող են փոխադարձաբար համաձայնության գալ՝ իրենց համապատասխան մանդատների շրջանակում:

ՀՈԴՎԱԾ 3. ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Կողմերը կհամագործակցեն մտավոր սեփականությանն առնչվող գործեր քննող դատավորների համար կոնֆերանսների, սեմինարների կամ հանդիպումների միջոցով դատական և այլ համապատասխան մասնագիտական փորձի փոխանակմանը նպաստելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 4. ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

4.1 Կողմերը կհամագործակցեն Հայաստանի Հանրապետության դատական իշխանության համար մտավոր սեփականության վերաբերյալ Դատավորների շարունակական կրթության (ԴՇԿ) ծրագրի մշակման և իրականացման հարցում:

4.2 ԴՇԿ ծրագրի նպատակներն են՝

ա) բարձրացնել դատավորների կարողությունները՝ մտավոր սեփականության վերաբերյալ ինքնաբավ շարունակական կրթական ծրագրեր իրականացնելու համար,

բ) զարգացնել դատավորների կարողություններն ու հմտությունները՝ մտավոր սեփականության վերաբերյալ վեճերն արդյունավետ քննելու և լուծելու համար (ավելի արագ լուծում, ավելի բարձր որակի և կանխատեսելի որոշումներ)՝ կիրառելի իրավական կարգավորումներին համապատասխան և հաշվի առնելով մտավոր սեփականության ազգային ռազմավարությունները, զարգացման նպատակներն ու առաջնահերթությունները,

գ) նոր դատավորներին հնարավորություն տալ ձեռք բերել նախնական պատկերացում մտավոր սեփականության բարդ ոլորտի մասին, իսկ փորձառու դատավորներին՝ ստանալ թարմացված տեղեկատվություն մտավոր սեփականության ոլորտի նոր կարգավորումների և զարգացումների մասին:

ՀՈԴՎԱԾ 5. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՏԵՂ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1 Կողմերը կհամագործակցեն մտավոր սեփականության արդիական հարցերի վերաբերյալ համատեղ հետազոտությունների, ինչպես նաև ԱԱ ՊՈԱԿ-ի կրթական և վերապատրաստման ծրագրերի համար ուսումնական և մեթոդական նյութերի մշակման հարցում:

5.2 Կողմերը յուրաքանչյուր միջոցառման մեկնարկից առաջ գրավոր կհամաձայնեցնեն սույն Հուշագրի շրջանակում համատեղ մշակված ուսումնական ծրագրերի, ուսումնական և մեթոդական նյութերի, հրապարակումների և հետազոտական արդյունքների պատկանելությունը և դրանց օգտագործման իրավունքները:

5.3 Նման համաձայնության բացակայության դեպքում ԱԱ ՊՈԱԿ-ն իրավունք ունի այդ նյութերը թարգմանել հայերեն, վերարտադրել և օգտագործել իր կրթական և վերապատրաստման ծրագրերի համար՝ անհատույց և առանց լրացուցիչ թույլտվության, ինչպես նաև շարունակել այդ օգտագործումը սույն Հուշագրի գործողության դադարեցումից հետո:

ՀՈԴՎԱԾ 6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Կողմերը ճանաչում են վեճերի լուծման այլընտրանքային եղանակների, այդ թվում՝ ՄՄԱԿ արբիտրաժի և հաշտարարության կենտրոնի մատուցած ծառայությունների հնարավոր օգտակարությունը՝ որպես մտավոր սեփականության վեճերի լուծման մասնավոր միջոց: Մասնավորապես, հաշտարարության, արբիտրաժի կամ փորձագիտական որոշման միջոցով

ապահովվող չեզոքության, ճկունության և մասնագիտական փորձառության, ինչպես նաև նման վեճերի կողմերի կարիքներին դրանց համապատասխանելու ներուժի վերաբերյալ իրազեկությունը բարձրացնելու նպատակով Կողմերը կհամագործակցեն վեճերի լուծման այլընտրանքային եղանակների վերաբերյալ համատեղ կրթական ծրագրերի և վերապատրաստումների կազմակերպման հարցում:

ՀՈԴՎԱԾ 7. ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

7.1 Սույն Հուշագրի իրականացումը պայմանավորված է Կողմերից յուրաքանչյուրի ռեսուրսների՝ ներառյալ բյուջետային, մարդկային և (կամ) տեղեկատվական տեխնոլոգիաների ռեսուրսների առկայությամբ, ինչպես նաև նրանց համապատասխան ներքին հաստատման ընթացակարգերով:

7.2 Սույն Հուշագիրը չի ենթադրում Կողմերի միջև ֆինանսական միջոցների փոխանցում: Կողմերից յուրաքանչյուրը կրում է սույն Հուշագրում նշված միջոցառումների իրականացման հետ կապված իր ծախսերը, եթե առանձին միջոցառումների առնչությամբ Կողմերի միջև գրավոր այլ բան համաձայնեցված չէ՝ Կողմերից յուրաքանչյուրի կիրառելի կանոններին և ներքին հաստատման ընթացակարգերին համապատասխան:

7.3 Կողմերը պարբերաբար հանդիպում են՝ սույն Հուշագրի շրջանակում իրականացված համակարգման և համագործակցության միջոցառումները վերանայելու և գնահատելու, ինչպես նաև դրանց վերաբերյալ համապատասխան առաջարկություններ ներկայացնելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 8. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

8.1 Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում երկու Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է անժամկետ:

8.2 Սույն Հուշագրի ցանկացած դրույթ կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ արտահայտված գրավոր ձևով:

8.3 Սույն Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել ցանկացած ժամանակ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից մեկի կողմից մյուս Կողմին երեք ամիս առաջ գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով: Կողմերից մեկի կողմից

սույն Հուշագրի գործողության դադարեցումը չի փոփոխում նախկինում ստանձնած կամ սույն Հուշագրի պայմաններով նախաձեռնված և իրականացվող միջոցառումներից բխող պարտավորությունները, եթե այլ բան համաձայնեցված չէ:

8.4 Սույն Հուշագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես միջազգային կամ ներպետական իրավունքով Կողմերից որևէ մեկի համար իրավաբանորեն պարտադիր իրավունքներ կամ պարտականություններ առաջացնող: Սույն Հուշագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով միջազգային պայմանագիր չէ:

ՀՈԴՎԱԾ 9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Սույն Հուշագրից բխող կամ դրա հետ կապված ցանկացած վեճ լուծվում է բարեկամաբար՝ Կողմերի միջև բարեխղճորեն վարվող բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 10. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն Հուշագրում կամ դրա հետ կապված ոչինչ չի համարվում ՄՄԱՀԿ-ին՝ որպես միջկառավարական կազմակերպության և Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված հաստատության, տրամադրված արտոնություններից և անձեռնմխելիություններից որևէ մեկից հրաժարում:

ՀՈԴՎԱԾ 11. ԼԵԶՈՒՆԵՐԸ

Սույն Հուշագիրը կազմված է անգլերեն և հայերեն լեզուներով: Անգլերեն և հայերեն լեզվական տարբերակների միջև անհամապատասխանությունների կամ մեկնաբանման տարբերությունների դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՎԵՐՈԳՐՅԱԼԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Հուշագիրը:

«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից

Տաթևիկ Հ. Սուջյան
Ռեկտոր

Ամսաթիվ՝
15 հոկտեմբերի 2026 թ.

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կողմից

Պասկալ Ֆոր
Գլխավոր տնօրենի տեղակալ
Հեղինակային իրավունքի, ստեղծարար տնտեսության և մտավոր սեփականության կառավարման սեկտոր

Ամսաթիվ՝
15 հոկտեմբերի 2026 թ